

«Գրանցված է»
 ՀՀ արդարադատության
 նախարարության կողմից
 8 հոկտեմբերի 2013 թ.
 Պետական գրանցման թիվ 12413385

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌՇՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ
 ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՀՐԱՄԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
 ԱՌՇՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-Ի
 N 237-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

30 սեպտեմբերի 2013 թ.
 ք. Երևան N 425-Ն

Հիմք ընդունելով «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9.6-րդ հոդվածի 1-ին մասը և ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասով,

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2013 թվականի մայիսի 24-ի «Օգտագործված դրոշմապիտակների ձեռքբերման համար վճարված գումարը հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման դիմումի ձևը սահմանելու մասին» N 237-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) Հրամանի վերնագրից, 1-ին կետից և հրամանով հաստատված հավելվածի (այսուհետ՝ Հավելված) վերնագրից հանել «օգտագործված» բառը.

2) Հավելվածի 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

« 11. Վերադարձված դրոշմապիտակների քանակ, հատ _____ ».

3) Հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12-րդ, 13-րդ և 14-րդ կետերով՝

« 12. Վերադարձված դրոշմապիտակների համար վճարված՝ հարկային պարտավորությունների դիմաց հաշվանցման ենթակա գումարը, դրամ _____	
13. Դրոշմապիտակների ձեռքբերման նպատակով վճարված գումար, որի դիմաց դրոշմապիտակներ չեն ձեռք բերվել, դրամ _____	

(դրամ)

14. Խնդրում եմ դրոշմապիտակների ձեռքբերման համար վճարված գումարը հաշվանցել ստորև նշված հարկային պարտավորությունների դիմաց _____	

»:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահ՝

Գ. Խաչատրյան